

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3.9

22 ≠

Դ. ԼԵՊԵՏՅԱՆՈՎԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---


1928—ՅԵՐԵՎԱՆ, 0. 6

18 ՀՈՎՅ 2017

Պ. ԼԵՊԵԾԻՆՍԿԻ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Թարգ. Ա. Ա.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՆ

1928-ԵԵՐԵՎԱՆ

## ԱՐԱԶԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Գրառելով՝ 498 ր. հ. 670 Տիրում 2000  
Գետհաստի յերկրորդ տոլարան Յերեվանում—1549

Բալթիկ և Սև ծովերից մինչև Խաղաղ ովկիանոսի ասիական ափերը տարածված հսկայական մի յերկիլ արդեն անցյալ դարի յերկրորդ կիսում գուրս յեկավ մինչկապիտալիստական եկոնոմիկայի խանձարուրից և սկսեց արտգ կերպով հասնել արևմտյան Յեղբուզայի արդյունաբերական յերկրների յետելից: Յեթք բարենորոգչական շրջանի առաջին տասնամյակներում դեռ ևս կարող ելին վորոշ իլլուզիաներ լինել Ռուսաստանի զարգացման ինքնուրույն ուղիների նկատմամբ—վոչ-կապիտալիստական յերկրների տիպի, —ապա 90-ական թվականներին միանդամայն պարզվեց արդեն, վոր այս յերկրի կանքը վերջնականապես և անվերադառնութիւ կերպով կանգնել և կապիտալիստական զարգացման նշանի տակ: Մեկ ու կես տասնյակ տարվա ընթացքում (1875-78 թվականներից մինչև 1892 թիվը) Ռուսաստանի շոգեշարժիչների թիվը, ըստ ուժերի քանակի, աճել է յերեք անգամ (115 հազար ձիու ուժից մինչև 345 հ. ձիու ուժի): Արդյունաբերության բոլոր ճյուղերում արագ կերպով աճեցին արտադրության նոր ձևերը: 1880 թվին քարածուխ և արտահանված 200 միլ. ֆութ, իսկ 1893 թ.՝ 464 միլիոն ֆութ: 1881 թվին չուզուն, յերկաթ և պողպատ և մըշշակված 85 միլ. ֆութ, իսկ 1896 թվին՝ 152 միլիոն ֆութ: Ռուսական բարակեղեն դործվածքների ար-



1-236/98

դուռաբերութիւն շրջանառությունը 1883 թվին հասակ 280 միլ. ռուբլու, իսկ 1893 թվին՝ 385 միլ. ռուբլու: 1881 թվին նազիթ արդյունահանված է 41 միլ. փութ, իսկ 1895 թվին 347 միլ. փութ: 1881 թվին չերկաթուղագծերով բերներ են տեղափոխված  $2\frac{1}{2}$  միլիարդ փութ, իսկ 1896 թվին ավելի քան 6 միլիարդ փութ: Նկատվում է քաղաքների արագ աճում, քաղաքային բնակչությունն յերկու անգամ ավելի արագ է աճում, քան մնացածը: Մի խոսքով, ուժունական և իննունական թվականների սերնդի աչքի առջև Ռուսաստանի եկոնոմիկան ապրեց հեղափոխականորեն՝ արագ զարգացման մի շրջան: Այստեղից հասկանալի է դասում, թե վորքան խղճուկ և հետամնաց պիտի թվար նարոդնիկութիւն հետորդների իդեոլոգիան, վորոնք 90-ական թվականներում ևս շարունակում էր իրենց ծիծաղելի գործերը՝ թախանձանքներով ու վորքերով «մուժիկալին» Ռուսաստանը փրկելու կապիւտիվմի ապականիչ ազդեցությունից: Երանք համասորեն չելին ուզում տեսնել վոր կապիտալիզմ արդեն շրջապատղ իրականութիւն անվիճելի փառացն և նրանք վոչ մի կերպ չելին ուզում ըմբռնել վոր ծնունդ ետուի արդեն նոր հեղափոխական մի ուժ հանձինս պրոլետարիատի, վորի վրա միացն կարելի յե հույս դնել: Վորպես ամեն տեսակ հարստահարողների ու շհհագործողների դեմ հետեղականորեն և վճռական կերպով պարագանի:

Վլագիմիր իմիջը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հայտնի գրքուի ում 90-ական թվականներում Ռուսաստանի չափահաս տղամարդկանցից մոտ  $2\frac{1}{2}$  միլիոն վարձու բանվոր է հաշվում, այսինքն

Ռուսաստանի նյութական արժեքներ արտադրելու գործում մասնակցող ամբողջ չափահաս տղամարդ բնակչութիւն մոտ է եսը: Այս թվից գործարանային, հանքային և իրակաթուղարքին բանվորներին բաժին է ընկնում  $2\frac{1}{2}$  միլիոն հզորի: Այս արդեն կապիտալիզմի դասակարգակին թշնամիների փոքր կազմ չեր: Վորքան ել զեռ հզոր ու անեղ եր վոստիկոնական կուլակի կոպիտ ուժի և զինվորական սվինի աշխատանքի վրա հիմնված ցարական գեսպոտ կառավարության իշխանությունը, այնուամենայնիվ ուսւա յերիտ սարդ պրոլետարիատն արդեն 90-ական թվականներին իր մեջ բավականաչափ համարձակություն ու գասակարգակին գիտակցություն զտավ, վորպեսզի «խառնիճազանձ կերպով» զուրս զա իրեն սարկացնողի դեմ և հաջողությամբ իր համար վորոշ իրավունքներ նվաճի: Ռուսական հեղուփոխութիւն բոլոր պատմագետները 90-ական թվականների միջին տարիները նշում են, վորպես սուսական բանվորական շարժման մեջ աննախընթաց վերելքի մի շրջան, վորը բնորոշվում է մինչև այդ չտեսնված մի ամբողջ շարք գործադուլային պոռթիկումներ: վ: 1895 թ գործադուլքոնկվուց «Մեծ Յարուցավակու մանուֆակտուրայում» («Большая Ярославская мануфактура») վոր ճնշվեց զորքի ոգնությամբ (իրենց սիրազործությամբ աչքի ընկան «քաջ Փանազրեցիներ» («МОЛОДЦЫ фанагрейцы»), վորոնք Նիկոլայ Ա-ի մեծ շնորհակալութիւնն արժանացան): Դրանից անմիջապես հետո արլունահեղություններով ու բանվորների վերաբերմասը գործած բռնություններով անցան Տեյկովում և իվանովովոնիներներում բռնկած գործադուլքությունը թերւուսկի

ոգոստոսւան գործադուլն ընդգրկում և 26 հազար բան-  
վորի բոլոր քաղաքային գործարաններից: Սակայն գոր-  
ծադուլալին շարժման ամենագրանդիոզ պատկերը մենք  
տեսնում ենք Պետերբուրգում (այժմ Լենինգրադ), վոր-  
տեհ գործադուլները, սկսվելով 1895 թվին, յերկար  
անցնում են ամբողջ 1896 թվականի միջով և ընդգրը-  
կում 1897 թվականը: Տասնյակ հազարավոր բանվոր-  
ներ կուռ շարքերով գործադուլ են անում Տորնտոնի  
մահուցի գործարանում, Լաֆերնի ծխախոտագործա-  
րանում, Լեբեգի մանածագործարանում, և հետո 1896  
թվին—Պուտիլովյան գործարանում, Քլոնիցի բամ-  
րակամանարանում, Վորոնյնի մոտ, «Նորու Ամի-  
րալտեյստվո»-յում և պետական Ալեքսանդրյան չու-  
գունի գործարանում, ինչպես և մի ամբողջ շարք  
այլ վայրերում (Մոսկվայում, Նիժնյում, Վիլնյա-  
յում, Կիեվում, Ռիեսաալյում, Կոստրամայում, Բելոստո-  
կում, Կովնոյում և այլուր),— վերջապես 1897 թվին  
Պիտերում, վորտեղ գործադուլ արեցին 15 հազար ջուլ-  
հակներ: Այս տասնյակ հազարավոր բանվորները յեր-  
կար ժամանակ տհի ու յերկուողի տակ են պահել վոչ  
միայն կապիտալիստներին, այլ և ցարական կոռուպ-  
տությանը: Իզուր չեր վոր գործադուլներից սարսափա-  
հար յեղած ցարական մինիստր Վիտաեն շատպեց հը-  
րատարակել 1897 թվի հունիսի 2 ի որենքը, վորը վո-  
րոշ չափով սահմանափակում եր բանվորների կապի-  
տալիստական շահագործման չափերը:

Ինքնըստինքան հասկանալի յե, վոր «գոյու-  
թյուն ունեցող հասարակակարգի» հիմքերը տատանե-  
լու վորոշ չափով ընդունակ նոր հասարակական ուժի  
այդ ձևով պատմության բեմը յելնելը չեր կարող կա-

տարվել տարերայնորեն և պետք եր վոր զուգակցվեր  
շարժման կազմակերպչական կենտրոններ առաջանա-  
լու հետ: Յուրաքանչյուր դասակարգ կարող և աճել և  
հաջողությամբ պայքարել իր սոցիալական թշնամի-  
ների գեմ միայն այն ժամանակը, իերը նա գործում ե  
կազմակերպված ձևով, այսինքն, յերբ նա ունի իր սազ-  
մական շտաբը, փորձված զեկավարները, իր գործին  
նվիրված առաջնորդները, թեորետիկական տեսակետից  
մարդկած ու տոկուն իդեոլոգները և տվյալ պատմա-  
կան կացությանը հարմարեցված սեփական դասակար-  
գային ինքնորոշման կազմակերպչական ձեւեր:

Ցեղ իրոք, ոռուսական սոցիալ-դեմոկրատիակի  
այսինքն ոռուս պրոլետարիատի դասակարգային շահե-  
րի ավանդակարպի ու արտահայտչի պատմությունն սկսա-  
վել է կուսակցության առաջին համագումարից դեռ  
շատ տուած: Վաղիմիր Իլիիչն այդ պատմության մեջ  
մինչև 1898 թիվը տարբերում ե յերկու շրջան, առա-  
ջին շրջանն ընդգրկում է մոտավորապես 1884—1894  
թվականների տասնամյակը, իսկ յերկրորդն ընդգրը-  
կում է 1894—1898 թ. թ. քառամյակը:

Ինչնիվ և բնորոշվում առաջին շրջանը: Իլիիչի ա-  
սելով, այդ «սոցիալ դեմոկրատիակի թեորիակի ու ծր-  
րագրի առաջացման ու ամրացման շրջանն» եր: «Սո-  
ցիալ-դեմոկրատիան զոյություն ուներ առանց բանվո-  
րական շարժման, ապրելով, վորպես քաղաքական կու-  
սակցություն, արգանգային զարգացման պրոցես»  
(տես Լենինի «Ի՞նչ անել»՝ ի յեղափակման գլուխը): Ցեղ  
երոք, ինչպիսի մոմենտներով ե վորոշվում մեր հեղա-  
փոխական շարժման զարգացման մեջ մատնանշված  
տասնամյակը: Ամենից առաջ, «աշխատանքի աղատագ-

րում խմբակի գործունելությամբ, Շնորհիվ Պետանովի և այդ խմբակի իմ ընկերների, Մարքսի ու Ենգելսի ռւսմունքը ներս և թափանցում Ռուսաստանի հեղափոխական ինտելիգենցիայի շարքերից սերված բազմաթիվ միայնակների (աճինօչկա) գլուխը և կամաց-կամաց-այդ ինտելիգենցիայի գիտակցությունից գուրս մղում հին նարոդնիկական նախապաշտումները, Այս յերկարատես պրոցեսը չի ավարտվում տվյալ շրջանի վերջում, բայց նա արդեն վերջնականապես նախապատրաստում է նոր իդեոլոգիայի լիակատար հաղթանակի մոմենտն այն պարբարում, վորն այդ իդեոլոգիան մղում եր ոռուսական հեղափոխական շարժման առաջնորդը խանգարող հին հոսանքների դիմ:

«Աղատագրման» խմբակի արտասահմանյան գործունելության հետ միասին Ռուսաստանի ներսում հեղափոխական գաղտնարաններում (պազոլե) սկսում են յերեալ մարքսիստական իդեաների ճնունդ առնելու սիմպոմներ։

1884 թվին Պիտերում առաջանում է Բլագոյեվի խմբակը «Ռուս սոցիալ-դեմոկրատների կուսակցություն» անունով. այս գեռ ևս «ուղղափառ» սոցիալ-դեմոկրատիան չե, խմբակը գեռես մարքսիստուն միանգամայն չի ինքնորոշվել, նա, եվալես ասած, դավանում է մարքսիզմի ու լասուալականության թեորետիկական ինչ զոր մի խառնուրդ, բայց այնուամենայնիվ Մարքսի ու Ենգելսի ռւսմունքի հիմք ծառայած բազմաթիվ իդեաներ այդ խմբակի միջոցով պատվատվում են Պետերբուրգի առավել գիտակից բանվորների գլխներում։

Բլագոյեվի խմբակի հետ միաժամանակ կառ Կը-

րանից անմիջապես հետո, մասամբ անկախ, իսկ առավել ևս հաջորդականության կարգով, սոցիալ-դեմոկրատա, կան միտքն իր համար ձանապարհ և հարթում և այլ կազմակերպությունների միջոցով, Այսպես, որինակ, նույն Պիտերում 80-ական թվականների կեսերին առաջանում է Պավել Տոչինսկու կազմակերպությունը («Ընկերություն»): Այնուհետեւ Բոգդանովի խմբակը և Բրուսնեվլյան հայունի խմբակը, վորը հենվում եր արդեն վոչ թե մի տասնյակ գիտակից սոցիալ-դեմոկրատ բանվորների վրա (այնպիսիները, ինչպես Բարուշկինն ե, Յեկոր ու Ֆեղոր Սֆանսաեվները և ուրիշները), վերջապես, սի ամբողջ շարք խմբակներ գավառում, Ֆյուլույեվի խմբակը Կաղանում, Արբամովիչի խմբակը Կիեվում, Ոյազանովի խմբակը Ոգեստալում, Յուլինիկովի կազմակերպությունը Խարկովում ու Ռոստովում և այլն։

80-ական թվականների վերջին և 90 ական թվականների վերջում սոցիալ-դեմոկրատական ընդհատակայա խմբակներն աճում են, ինչպես սունկը Ժանդարմերիան անուժ և հեղափոխական շարժման այս նոր ձևի առաջն առնելու, Մարքսիզմը նորանոր գիրքեր և նվաճում իր համար ոռու բանվորների արթնացած գասակարգային գիտակցության սպայմաններում։ Յեկանուամենայնիվ Իլիչն իրավացի լի, լերը այդ ժամանակի մասին արտահայտվում եր, վորպես կուսակցության արգանդական զարգացման շրջանի մասին։ Արդեն կար փոքրիշատե ձեւակերպված սոցիալ-դեմոկրատական թեորիա, ծնունդ եր առնում սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիա, բայց գեռ պահանջում երին բանվորական շարժման համարատառ-

խան ձեւը, վորոնց հիման վրա սոցիալ-դեմոկրատ-կանոնական միտքը կարողանար մի այնպիսի հսկավական ռոժ դառնալ, վորը դեկավարեր լայն բանվորական մաս-սաների շարժումը: Այս վերջին պայմանը ոռւս պրոլետարիատի գասակարգային պայքարի նկատելի ֆակտորն և գառնում միայն 1895 թվին, յերբ այն ժամանակի մարքսիստներից լավագույնի - Վլադիմիր Իլյիչ Լենինի աշխարհայեցողության մեջ վերջնական ձեվեր ընդունած հեղափոխական-մարքսիստական իդեոլոգիան սկսում է իր ուժն ու իր ձգությունն ըստուգել սոցիալ-դեմոկրատիալի կողմից Պետերբուրգի գործադրություները դեկավարելու փորձի հիման վրա:

Այսպիսով, սուսական սոցիալ-գեմոկրատիայի պատմության մեջ՝ չերկըրդ շրջանի սկզբը զուգաղղում է հԱՀՀի՝ առաջին անգամ պրակտիկ հեղափոխական աշխատանքի ասպարեզ գուրս գալու մոտենալի հետ: Յեվ այս պատճական չեւ: Բանվորական հեղափոխական շարժման «տարերքը» իր գարնանալին հորդության մոմենտում պատմականորեն դեմ և առնում իր դասակարգային «մտքին» հանձինս այնպիսի հոյակապ և բոլոր տեսակետներից կատարյալ առաջնորդի, ինչպես Վաղիսի հԱՀՀն և: Վորքան ել կարծ տեսն հԱՀՀի պրակտիկ աշխատանքի շրջանը (1895 թվի դեկտեմբերին հԱՀՀը և նրա խմբակն արդեն ձերբակալված ելին), այնուամենայնիվ վոչ ալ վորի, քան չեթե հԱՀՀին բաժին ընկազ առաջին անգամ հեղափոխական մարքսիստական գիտակցությունը մասսայական բանվորական շարժման հետ զուգակցիկու վառ որինակ ցուց, տալու պատիվը: Ինչպես մեքենավարը, վարպետորեն ձեռքը դնելով այս կամ այն լծակի վրա, իր կամ-

Քին ե յենթարկում հսկայական մեքենան, ձիշտ ալիդ-պես ել անձնազո՞ն հեղափոխականների մի փոքրիկ խըռ-քակ, այնպիսի «մեքենավարի» զեկավարությամբ, ինչ-պես իլիչն ե, կարողացավ գեպի ճակատամարտ (գեպի գործադպուլային պայքար) շարժել հազարավոր բանվոր-ների: Խմբակի ասեն մի թուոցիկը, հաճախ զրված-ձեռքով, կախարդիշ ազգեցություն եր գործում բան-վորական մասսաների վրա և կանգնեցնում հսկայա-կան գործարանի աշխատանքը:

իր կյանքի հենց այս շրջանում, իլլիչը բախտավոր պատեհություն ունեցավ համոզվելու այն բանում, թե ինչպիսի ուժեղ եֆֆեկտ կարող է թողնել իրեկուսկղբունքների - հեղափոխական գիտակցության և մասսաների՝ դասակարգա ին պայքարի համար պոտենցիալ (թագիքած վիճակում գտնվող) պատրաստության բախտավոր ու կարող զուգակցումը:

Պետերբուրգի ռՊայքարի միությանց տիպի նոր կազմակերպություններն հիմնվում բանվորական շարժման այլ կենտրոններում են, Մոսկվայում, Յեկատերինոսլավում, Կիևում, Անաբեկված ցարական կառավարությունը լարում ե իր բոլոր ուժերը սոցիալ-դեմոկրատիան խեղղելու համար։ Ժանդարմերիան սկսում ե իր մոլեգնությունները, ինչպես յերբեք։ Մի անհուջողությանը հետևում է մյուսը։ Հարցուրավոր սոցիալ-դեմոկրատների պոկում են իրենց աշխատանքից և նետում Միքիրի հեռավոր անկյունները։ Յեզ այնուամենայնիվ շարունակ քայլքայման լենթարկվող ու խեղղվող սոցիալ դեմոկրատիան միշտ իր մեջ ուժեր ե զբանում «մոխիրից վերածնվելու», շարունակելով բանվոր դասակարգի ուժերը հավաքելու իր աշխատանքը։ Յերբ սոցիալ-դեմոկրատական աշխատանքը փորոշ ժամանակով մեռնում ե մի վայրում, նաև սկսում ե աղբյուրի պես խփել յերկրի մի զորեւ այլ անկյունում։ Այսպես, որինտկ, յերբ անհավասար պայքարում ուժառապաված Պետերբուրգի «Պայքարի միությունը» դադարում ե ժամանակավական շարժման կենտրոնը լինելոց, այդ դերն անցնում ե Ռուսաստանի հարավին, ըստ զորում այս տեսակետից հատկապես բախտավոր եր Կիևը։

Այս ժամանակներում Կիևի համար նպաստավոր հանգամանք եր այն փաստը, զոր անտեղ եր գտնվում կիեվ բանվորական շարժման այնպիսի մի խոշոր զեկավար ու ներշնչող, ինչպես Յու. Դ. Մելնիկովն է։ Ազնվական ընտանիքից գուրս լեկած լինելով, բայց և այնպես նա այն աստիճանի թե պրոֆեսիոնալ (վորով փականագործ) և թե Հեղոմիքուական տեսակետից

իր՝ «լեռը» հալել եր բանվորական միջավայրում, վոր կարող ե բանվոր դասակարգի ամենատիպիկ ներկայացուցիչը և ականավոր առաջնորդը համարվել։ Նրա ազդեցությունը հեղափոխական աշխատանքի ասպարիզի իր ընկերների վրա հսկայական է լինել։ Իր հեղափոխական աշխատանքի խարկովիան շրջանից հետո նա հիմնավորվում է Կիևում վորպես արգեն համոզված սոցիալ-դեմոկրատ։ Նրա մասնակցությամբ և նրա անմիշ ջական դեղավարությամբ հիմնված և զարգանում է Կիեվի առաջին բանվորական կոմիտեն։ Դժբախտաբար, բազմիցս ձերբակալվելով և բանտում հստերվ նա արագ կերպով հյուծվում է և 1900 թվին մահանում է ցարական բանտերում ստացած թոքախտից։

Կիեվ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, զորի հիմնական կորիզը նրա զանազան անուններով («Ռուսկան խմբակ», «Բանվորական գործ», «Վակերյող» թերթով, «Բանվորական թերթի» խմբակ) գոյություն ունենալու 2 3 տարիների ընթացքում համարյա թե անփոփոխ եր մնացել, Ռուսաստանում միայլալ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն հիմնելու իդեալի, այսպես ասած, առավել զործոն կը բողն եր, և նրան և պատկանում նրա հղացած կուսակցության առաջնորդ առաջնորդն առաջին համագումար հրավիրելու զործն իր վախճանին հասցնելու պատիվը։ Այդ կազմակերպության հոգին Յովենալի Մելնիկովն էր, բայց նըսպության հոգին Յովենալի լին հավաքվել գործին նվիրված ըացի այնտեղ ելին հավաքվել գործին նվիրված և այլ սոցիալ-դեմոկրատներ, զորոնք կարողացան իւրեց ընդհատակյա աշխատանքը մեծ գաղտնապարհությամբ կատարել և այդպիսով իրենց խմբակի

Համար բավական լերկարտուն կրտսերք ապահովել \*):

Կիեկ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գրական առանձնահատկությունների (հատկություններ, վոր սպասեցին նրան նոր եջ ավելացնել մեր կուսակցության պատմության մեջ) շարքը պիտի դասել և այն, վոր այդ խմբակը շարունակ ձգտել և դուրս գալ տեղական աշխատանքի սահմաններից և վորեւ վճռական ու համարձակ քայլ անել գեպի իր ավանդական նպատակը, այն է՝ միացնել Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատական գործիչներին: Զի կարելի ասել, վոր կիեկ կազմակերպությունն իրավունք ուներ իդեական հեղեմոնիա (առաջնորդի գեր) պահանջել սուսական սոցիալ-դեմոկրատական ուրիշ կազմակերպությունների շարքում: Սակայն այն համառությունը, վորով նա ձգտում եր իր առաջարկած նպատակին և նրա համեմատական տոկունությունը, շնորհիվ պրովենցիալ ժանդարմերիայի յերկար համբերության և կազմակերպության անդամների կոնսպիրատիվ փորձառությանը, թույլ տվեցին նրան, վոր նա իր պատմական միուսիան վերջինիքո հասցնի իր վախճանին:

Դեւես 1897 թվի գարնանը, իր առաջ խնդիր զընկով իր «Վաերյողից» անցնելու համառուսական թերթի հրատարակության, կիեկ կազմակերպությունը (այն ժամանակ «Բանվորական գործ») մտածում եր Ռուսաս-

\*) Այդ խմբակի ականավոր անդամներից մեկը և համագումարի գլխավոր կազմակերպիչ ընկ. Բ. Ե. Եյգելմանը մինչև այժմ ել մեջ կուսակցության կյանթից նկարագրված այս պատմական մամենտի կենդանի վկան եւ նրա հեշտությունները մինչև այժմ զըլթագոր աղբյուր են ծառայում առաջին համագումարի մասին տըլ. վոր մեր տեղեկությունների համար:

տանի բոլոր սոցիալ-դեմոկրատական գլխավորագույն խմբակների ներկայացուցիչների խորհրդակցություն գումարել և այդպիսով կուսակցության առաջին համագումարի պիս մի բան իրագործել «Բանվորական գործի» խմբակը մեծ ծանոթություն չուներ մասցած կազմակերպությունների գործունելության ու Փիզիոնմիայի հետ: Պետերբուրգի «Միության» մասին նազիտեր ախնքան, վորքան հալունի լիր լակն հասարակությանը «Միության» թուոցիկներից և Պետերբուրգի գործադպուների վերաբերյալ տպագրվող խրոնիկայից: Ճիշդ ալդապիսի անորոշ տեղեկություններ նա ուներ նաև Նիժնու և Խվանովու և Խվանովու Վոզնեսենսկի մասին: Բայց և այնպես, խմբակը վճռական ու համարձակ կերպով հետապնդում ե «համագումար» հրավիրելու նպատակ իր մոտ, կիեկ հրավիրելով PPS (լեհ սոցիալիստների կուսակցություն), լեհ սոցիալ-դեմոկրատների խմբակի, Վիլնայի, Պետերբուրգի, Մոսկվայի և Խվանովովոզնեսենսկի կազմակերպությունների ներկայացուցիչներին: Մոսկվայի պատգամավորը համագումարը նախաձեռնողներին կասկածելու չափ յերիտասարդ և թըլվում և նրանք լետ են տալիս նրան Վիլնայից և Խվանովոզնեսենսկից վօչ վարիս, այնպես վոր համագումարի փոխարհն մի համեստ «կոնֆերենցիա» յեմիայն ստացվում (1897 թ. մարտի 17), վորին ներկայինություն կիեկ յերկու խմբակների ներկայացուցիչները միայն և Պետերբուրգի «Միության» պատգամարը:

Ստկայն 1897 թվուն համագումար հրավիրելու անհաջող փարձը չվհատեցրեց կիեկ կազմակերպությանը, և նու այնուհետեւ վերածվելով «բանվորական թերթ»

խմբակի, իր առաջնապատակ գրեց կրկնելու նույն փորձը համապատասխան պատրաստություն տեսնելուց հետո:

«Բանվորական թերթն» արդեն համառուսական որդանի գեր խաղալու համակնություններ ուներ: Լուս տեսավ նրա յերկու համարը՝ 1897 թվի ոգոստոսին և գեկտեմբերին: Յերբորդ համարը լույս չտեսավ: Թերթը հարուստ չեր անվանի զրական ուժերով: Վեդորչիկ, Տուչանսկի, Ռոգենբերդ, Ետինգեր—այս գրչի այն աշխատավորները, վորոնց վրա յեր ընկած թերթը համապատասխան բովանդակությամբ լցնելու ծանրությունը: «Նոր Խոսքի» շուրջը համախմբված այնպիսի զրականացեած մարքսիստների փայլուն պլեյադայի համեմատությամբ, ինչպիս Ստրուվն, Տուգան-Բարանովսկին, Բուլգակովը և ուրիշներն եին, չխոսելով արդեն Վլադիմիր Իլյիչի մասին,— «Բանվորական թերթում» զրոյները բավական համեստ մեծություններ եին թվում: Մակայն նրանք ունեին այն արժանիքը, վոր առանց ինելքներին զոտ տալու, լնդանուր և ամբողջական տռումով ճիշտ տոն եին բանում սոցիալ-դեմոկրատիայի ինդիբներն տակտիկան վորոշելիս, դեմշեիին գնում «Հներին» (Պետերուրի Միության հիմնադիրներին, Վլադիմիր ու Իլյիչ Գլխավորությամբ) \*) և իրավունք ունելին կոչ-

\*) Յերր Վլադիմիր Իլյիչը և նրա խմբակը (Գ. Կոժիստա-նովսկի, Յու. Մարտով, Դ. Ստրուվ, Ա. Վենեցիկ և ուրիշները) 1895-96 թվականներին «Ելիկվերացիայի յենթարկվելին» ժամանացավ յերթապարզների ձեռքը, վորոնց նեղապահան ժառանգությունների այն հոգած պարագաները, որոնց վերաբերյալ 1897-98 թվականները ակեց այլակայացուցիչներն ելին այլիքառած ստանալ, վորը հայտնի յի նեղութեղմանունուվ:

վելու «որթոդօքս» (ուղղափառ) մարքսիստներ: Խնքը Պէկիսանովը և «Ազատագրման» խմբակը «Բանվորական թերթի» մասին բավական հավանությամբ ելին խոսում: «Իմ աչքում,—ասում ե Պէկիսանովը «Բ. Թ.» խմբագրությանը հացելագրած իր նամակում, —Ճեր որդանը նմանապես և մեր որդանն ե, բոլոր նրանց որդանը, վորոնք պատկանում են ոռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը»: Յերկու հանգամանք Պէկիսանովին հարկադրում են կիշեցիների որդանը զնահատակ դրական կողմից: 1) այս որդանը սվիրված և համառուսական ինդիբների քննությանը և հետապնդում ե տեղական խմբակը կուռ կազմակերպված մի ամբողջի մեջ միաձուլելու նպատակ, վոր «այժմ ոռուսական սոցիալ-դեմոկրատիայի հետագա հաջողությունների անհրաժեշտ պայման ե գարձել»: 2) մինչդեռ ոռուս սոցիալ-դեմոկրատները «միշտ չեն հիշում Մարքսի այն չափազանց կարեոր միտքը, վոր ամեն դասակարգային պայքար քաղաքական պայքար և» (վորի մասին կարելի յի մոռանալ իր տեղական խրձարակային գործերով տարգելու գեղգում), «Բանվորակային գործերով տարգելու գեղգում», «Բանվորական թերթը» իրավունք և տալիս կարծելու, վոր նա կան թերթը» իրավունք և տալիս կարելի լի մեր հեղափոխական այս հարցում, «վորը կարելի լի մեր հեղափոխական շարժման հարցերի հարց համարել», կանգնած և ճիշտ տեսակետի վրա:

Յեկ իրոք, բավական ճամբան աչքի անցնել թերկուց հենց «Բանվորական թերթի» և 2-ի առաջնորդողը, վորպեսզի գտնենք յեկանութիւնութագրի հասդողը, վորպեսզի գտնենք յեկանութիւնութագրի հողմից քաղաքական տառությունը: Բանվոր գործարդի կողմից քաղաքական պատություն ապահով անդամական վերաբերյալ առաջնորդագագառություն անդամական վերաբերյալ մի կառկած չի թողնում, վոր դողի հեղինակը վոչ մի կառկած չի թողնում, վոր

թերթն իրոք այդ տեսակետին եւ «Եառավարական ձնշումների լերկաթե ճիրաններում,» ասված ի այն տեղ, — ոռոսական բանվորական շարժումն արդեն նեղ ե զգում իրենց: «Առանց գործադուլների, ժողովների, միությունների, խոսքի ու մամուլի ազատությունն ձեռք ըիրելու, առանց լերկրի կառավարման և որենքներ հրատարակելու գործում մասնակցելու իրավունք ստանալու, — մենք լերեք դեն չենք նետի մեզանից տնտեսական ստրկության ձնչող շղթաները: Ահա թե ինչու ինքնակարական կառավարության դեմ քաղաքական ազատության համար պայքար մղելը ոռոսական բանվորական շարժան ամենամերձավոր խնդիրն եւ: Բանվորական շարժման մոտավոր խնդրի վերաբերյալ այս միտքը միանգամայն դեմ եր արդեն այն ժամանակ ոռոսական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում հասունացող այն հոսանքին, վորը վառ արտահայտություն գտավ «Կրեպո» (լատ. credo բառը նշանակում ե «Հավատում եմ») տխրանոչակ դոկումենտում, նրա հիմքն եր կտզմում այն իդեան, վոր դասակարգն ունի իր ուրույն խնդիրը — տնտեսական պայքար մը զել իր աշխատանքային դրության անմիջական բարելավան համար, իսկ քաղաքական պայքարն իր ուսերի վրա կրելու լի լիբերալ բուրժուազիան, վորչափով նո շահագրգոված ե քաղաքական ազատություններ նվաճելու գործով:

«Բ. թ.» № 2-ի առաջնորդողի մյուս կենտրոնական կետն այն միտքն ե զարգացնում, վոր անհրաժեշտ ե շտապել բոլոր սոցիալ-դեմոկրատական ուժերը միացնել «մի կուռ ամրողջի մեջ ընդհանուր անունով և կոռ կազմուիրապությամբ»: Թերթը բանվորներից

պահանջում ե վոչ միայն ըմբռնել միացման ոգումն ու նշանակությունը, այլ և այդ ուղղությամբ սկսվելիք անմիջական գործողությունները, վորովհետև «հասնել ի այն ժամանակը, լերը առանձին, ամենուրեք ցրված բանվորական խմբերն ու միությունները պետք ե մի ընդհանուր միություն կամ մի ընդհանուր կուսակցություն զանան»: Այդ կուսակցության կարմիր գրոշի վրա պետք ե զրվի «Պրոլետարներ բոլոր լեր կիրակություն, միացնեք» լոգունովը: Բայ այդմ թերթը ընույած է հայտնում, վոր «ոռոսական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն կազմելը հզոր խթան կհանդիսանա սուսական բանվորական շարժման զարգացման համար: Ամբացած ու ուժեղացած ոռոսական բանվորական շարժմանը կտապալի ինքնակարության լուծը և տեր կդառնա քաղաքական ազատության:

Հենց այս պլատֆորմայով ել «Բանվորական թերթի» խմբակը հանգես լեկավ վորպես համառուսական թերթի խմբակը հանգես լեկավ վորպես համամարտիկ: Սահամազումար հրավիրելու գործի նախամարտիկ: Սակայն միայն ճիշտ պլատֆորման և միայն խմբակի բարեկային դրությունը բավական չելին կուսակցության ըի ցանկությունը համար: Յեվ լեթե միացման գործը զրուխ բերելու համար: Յեվ լեթե վերջիվերջո կիտեղիցիներին հաջողվեց իրագործել իւղերջիվերջո կիտեղիցիներին հաջողվեց իրագործել իւղերջիվերջո այդ նվիրական լերազը, ապա այդ հաջողուրենց այդ նվիրական լերազը, ապա այդ հանգաթյանը նշանակալից չափով նվաստել ե այն հանգաթյանը նշանակալից վաղապահական մասերի կազմամանքը, վոր կուսակցության բոլոր մասերի կազմամանքը, վոր կուսակցության բոլոր մասերի կազմամանքը:

թվին։ Համենայն դեպս, Վլաղիմիր Իլիչը դեռևս իր հեղափոխական զործունեյության առաջին շրջանում պարզ կերպով պատկերացնում եր իրեն և սոցիալ-գենոկրատիալի խնդիրները։ (այս հարցի վերաբերյալ իր տեսակետները, վորոնք ամրացված են 1894-1895 տարիների պրակտիկ աշխատանքի անձնական փորձով՝ նա մեկնարանել և 1897 թվին գրված «Ուսուսցիալ-գենոկրատների անելիքները» հայտնի բրոցուրում), և միասնական բանվորական կուսակցություն կազմելու նշանակությունը։) Այսուհետև 1896 թվին Պետերբուրգի «Պայքարի Միության» խմբակը, դատելով նադ. Կոնստ. Կրուպսկայալի հիշողություններից, վորոշ պրակտիկ քայլերի լի ձեռնարկել իրագործելու ընդհանուր անհեղալ թերթ հրատարակելու և կուսակցության համագումար նախապատրաստելու ծրագիրը։

Հետագայում այս ուղղությամբ ևս ավելի վճռական փորձ արեց «Բանվորական Դրոշի» խմբակը (խառն խմբակ Պետերբուրգի «Սոցիալիստ» խմբակից և Բելոստոկի «Բանվոր հեղափոխականների խմբակից»)։ Տվյալ տեսակետից այս խմբակը մրցում եկիցի կազմակերպության հետ։ Սակայն նաև չեր կարող միացնող շարժման կենտրոնում կանգնել թեկուզ հենց այն պարզ պատճառով, վոր հենց ինքն ել դեռ ևս միանգամայն չեր ինքնորոշվել, վորպես մարքսիստորեն կոփած իդեոլոգիական տեսակետից կազմերաբություն։ Կուսակցության միացումը նա պատպաժման տպագիր խոսքի միջոցով մասսանելի վրա ներգործելու համար, ըստ վորում առանձին անձնա-

վորությունների այս հողի վրա միաձուկելը, նրա կարծիքով, ամենեկին չեր պահանջում կուսակցության սիացած անդամների մտքի թեորետիկ (ծրագրային) միասնականություն, «Ի՞նչ վերաբերում ե զուտ թեորետիկական բնույթին, — ասվում եր «Բանվորական Դրոշի» ղեկավար հոդվածներից մեկում, — մենք լինիթագրում ենք, վոր կուսակցությունն առանց վորեւ վաս հասցնելու իրեն կարող ե այս տեսակետից լուրաքանչչուրին իրավունք վերապահել «համարձակվել իր դատողությունն ունենալու»։

Սակայն և անկախ նրանից, վոր գանազան խըմբակներ ուղղակի նպատակ դրին իրենց միասնական կուսակցություն ստեղծել չկար փոքրիշատե նշանակալից մի այնպիսի սոցիալիստական կազմակերպություն, վորը հանգամանքներից դրվագ հարկադրվագ թվուն, վորը հանգամանքներից դրվագ հարկադրվագ թվուն, վորը ազգեցությունն ընդլայնել հարեւան կազմիներ իր ազգեցությունների նկատմամբ և կապեր հաստատել այլ խմբերի ու խմբակների հետ։ Այսպես, որինակ, Ողեսսալի կազմակերպության անդամ Դարզուց Լիազովեցկայան իր հաջողությունների մեջ 1897 թվի մասին հաղորդում և. «Մենք արդեն բավական ճշտ կերպով կապ ենք հաստատել կիւելի, կրիմենչուկի, կերպով կապ ենք հաստատել կիւելի, կրիմենչուկի, Յելիզավետգրադի, Յեկատերինոսլավի հետ և միանչելիզավետգրադի, Յեկատերինոսլավի հետ կապաման կանոնավոր Նիկոլայեվի հետ, կապ ենք հաստատել նույնիսկ աշխատաղների հետ։» Սակայն, այս տատել նույնիսկ աշխատաղների հետ։ Սակայն, այս կապը գեռ ևս պլանաշախվության բնույթ չուներ, և հիշողությունների հեղինակը հարկադրվագ ե ժխտել այնշողությունների առկայությունը՝ խմբակի աշխատիսի նվաճումների առկայությունը միջն կապ հաստանքի և այլ կազմակերպությունների միջն կապ հաստատելու ասպարիզում՝ ինչպիսի նվաճումներ կային,

սրբնակ, կիրեվում և Նիկոլայեվում («Հարավ ռուսական բանվորական միություն»):

Ռուսովիթ շարժման մասնակից Բիստրիցկայա-Տորոսյեվան հիշում է, «իշխությունները վերաբերում են նույն ժամանակաշրջանին, — թե ինչպես Լուգանսկից, իվանովո-Վազնեսենսկից, Սուլինից, Տուլուց և Տագանրոգից լիկած բանվորները միախառնվում են մոստովիթ շարժմանը: Իսկ դերք պարզվեց, վոր Բագրում, Տագանրոգում, Սուլինում և Լուգանսկում աշխատանքը թույլ է կատարվում, այն ժամանակ Դունի կոմիտեն կապ հաստատեց այդ քաղաքների հետ:

Վիտերսկի կազմակերպությունը, վորն աճեց 1896 թվին Վիտերսկ արտաքսված հակողության լենթակա հեղափոխականների ազգեցության ներքո (Զասլավսկու Յեկատերինոսլավից և Նրա կնոջ Դուբինսկայալի), իր հերթին վորոշեց իր անդամների մի մասին ուղարկել այլ կազմակերպություններ հեղափոխական փորձ ձեռք բերելու համար: «Մեր ընկերները, — գրում են այդ խրմակի անդամ իլլա Վիլկենսկին, — ինդան Վիլսայում, Մինսկում, Մոգիլեվում, Գոմելում, Կիյևում, Կրեմնչուգում, Պոլտավյում, Ֆեոդոսիայում»:

Յեղ այսպիսի որինակներ կարելի լին բերել վորքան ուղեքը կամ ինքը վոստիկանությունն արտաքսութիւնով նպաստում է սոցիալ-դեմոկրատիալի տարածմանը զանազան կողմեր, կամ կազմակերպություններն իրենց աշխատանքի ընթացքում գեմ են առնում այն մտքին, վոր հարկավոր ե դուրս գալ սեփական «ծխի» սահմաններից և կապ հաստատել այլ կազմակերպությունների հետ: Հեղափոխական մարտաբեմում արդեն լիրեան և գալիս ին վորքան ուշ, այն-

քան ավելի հաճողիակի) պլոտիկօսիսալ, հեղափոխականի այն տիպը, վորի վրա հետագայում հույս ե զնում և «Խոկրան»: Այդ պլոտիկօսիսալ, հեղափոխականը հեղափոխական շարժման մի կինուրոնից մշուսն ե անցնում, թագնվելով պահնորդական բաժնի «ամենատեսաչքից», ի նկատի ունենալով առանձին խմբակներում որ-որի վրա ավելի և ավելի հասունացող այն պահանջի շահերը, վոր հարկավոր ե Ռուսաստանուր գործող կազմակերպությունները գործնականապիս ու իդեալիստ միացնել: Որինակ, Մելլիլովին մենք տեսնում ենք աշխատելիս մերթ մոստովում, մերթ Խարկովում, մերթ Կիևովում, Նիկոլայյան խմբակի առաջնորդ և Բրոնշտեյնը (Տրոցկի) հարազատ մարդ և դառնում կիսում: «Բանվորական Դրոշի» դեկավար Զ. Լարքեն թափառում ե ամբողջ Ռուսաստանում: Յեղ վոչ միայն այնպիսի խոշոր միավորներ, ինչպես մեր թվածներն են, այլ և այն ժամանակվա տասնյակ հարյուրավոր շարքային աշխատանիր, ինչպես հեղափոխական մետյուրներ, այսուղ ու այնտեղ լերկում են ու չբանում: Այս ըուրը միանդամայն վորոշակի են ու չբանում: Այս ըուրը միանդամայն վորոշակի կերպով այն և ասում, վոր ինքը կանքը հրամագողական պահանջել ե ամբողջ Ռուսաստանով մեկ ցրված սոցիալ-դեմոկրատներին միացնել մի կուռ կազմակերպության, այսինքն կուսակցության մեջ:

Առաջին համագումարը, վորը մեծ ինամքով (կոնսավիրատիվ տեսակետից) նախապատրաստել եր Կիեվի կազմակերպությունը, տեղի ունեցավ Մինսկում 1898 թ. մարտի 1-ին (չին տոմարով): Համագումարին ներկա եյին «Բանվոր դասակարգի ազատագլուր իր սահմանական միությունների» պեման համար պատրարող՝ չորս «միությունների»՝ Պե-

տերբութզի, Մոսկվայի, Կիևի և Յեկատերինոսլավի «Բունդի» (դրանից քիչ առաջ Վիլնյուս կազմակերպված ըշանի կազմակերպությունից) և «Բանվորական թերթ» խմբակի ներկայացուցիչները, —ընդամենը 9 հոգի. Գետերբութզի «Միությունից» — Ս. Ի. Ռատչենկոս, Յեկատերինոսլավի «Միությունից» — Կազ. Աղ. Գետրուսեվիչը, Կիևի «Միությունից» և Կիևի բանվորական կոմիտեից — Պ. Ա. Տուչապսկին, Մոսկվայի «Միությունից» Աղը Վաննովսկին, «Բունդից» — Ա. Կրեմերը, Մուտնիկը (Գլեր) ու մի ժամագործ բանվոր և Բանվորական թերթից» Ենդելմանն ու Վիդգորչիկը: Զանազան պատճառներով կամ չեն հրավիրվել, կամ չեն յեկել Որեսսայի, Նիկոլայևի, Խարկովի, Լիտվական սոց.-գենոկրատական կուսակցության, «Ռուս սոցիալ-դեմոկրատական Միության» արտաստհմանլան խմբակից, Ենաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի և «Բանվորական թերթ» խմբակի ներկայացուցիչները: Սակայն և այն կազմով, վորով փաստուեն տեղի ունեցավ առաջին համագումարը, նա կարողացավ բավականաչափ հեղինակություն վայելել վորովնետև ներկայացուցիչներ ուներ բոլոր խոշորագույն ուստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից:

Առաջին հարցը, վոր քննության առնվեց համագումարում, կուսակցության անվան հարցն եր: Համագումարը վորածեց կուսակցությունն անվանել «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցություն» (ՌՍԴԲԿ), Անուհետև քննության ըլլը վաճառաջին հարցերից մեկն եր ազգային հարցը, վորը ծագիլ է կուսակցության կողմից գեղի ԲԲԸ

(լեհ սոցիալիստների կուսակցություն) ցույց տալիք վերաբերմունքի մասնավոր հարցից: Ալս, թերևս, միակ ծրագրային հարցն եր, վոր քննության լենթարկվեց համագումարում, վորովհետև, ինչպես հայտնի լի, և համագումարը ծրագրի պատրաստի նախագիծ չուներ և կուսակցությանը ծրագիր չափեց: և համագումարի՝ ազգային հարցը վերաբերյալ հանաձ վորոշումը վորը ճանաչում և ամեն մի ազգության ինքնորոշվելու իրավունքը և կուսակցությանը թույլ է տալիս իր կենտրոնի միջոցով հարաբերությունների մեջ մանել այլ հեղափոխական կազմակերպությունների հետ, պատմանով, վոր զբանով կուսակցության ծրագրի և տակտիկայի սկզբունքները չխախտվեն, հետագայում նույսակցության լի համագումարի նման վորոշման հիմք ծառայեց: Տեղական կոմիտեների ինքնավարության վերաբերյալ հարցի առթիվ համագումարը կենտրոնացման խիստ սկզբ և նը չսահմանեց, և սրա հետևանքով Բունդին ինքնավարություն արվեց: Սակայն այլ ինքնավարությունը համագումարի կողմից բավական սահմանափակ եր պատկերացվում (նա գլխավորապես այն միտքն եր պարունակում, վոր Բունդին իրավունք վերագանձի հրեական լեզվով գրականություն հրատարակելու), և համենայն դեպս համագումարի վորոշումը վոչ մի առնչություն չուներ Բունդի և կուսակցության փեղերատափիվ կապի սկզբունքի հետ, ինչպես հետագումարը համապությամբ բարձրացնելու գրան ելին ձգտում բունդականները:

Կուսակցության կենտրոնի մեջ ընտրվեցին կուսակցության մեջ առաջները և և տոն տվող լիրեր խմբակի՝ Գետերբութզի «Միության», Բունդի և «Բանվորական» Գետերբութզի «Միության», Բունդի և «Բան-

վորական թերթի» լերեք ներկայացուցիչ: Կենարոնական որդան ճանաչվում է «Բանվորական թերթը»:

Կենարոնական կոմիտեին հանձնարարվում է կուսակցության կազմակերպման մասին մանիֆեստ հրատարակել, վորը և իրաք շուտով հրատարակվում է: Մանիֆեստի նախագծի հեղինակն եր տիրահանչակ Պյոտր Ստրուվեն, վորը հետագայում չարամիտ ունեցած դաշտավ, իսկ այն ժամանակներում դեռ պատրաստ եր «ծառայություններ Ռատուցել» հեղափոխական սոցիալ-դեմոկրատիալին: Զի կարելի ասել, վոր այս մանիֆեստում չի լերեւմ ապագա լիբերալի և բուրժուական գասակարգային շահերի համար պայքարողի անհատականությունը: Մանիֆեստում ընթերցողը չի գտնի իդեալի այն պարզությունը և սոցիալ-դեմոկրատական սկզբունքների այն վորոշակիությունը, ինչպիսի հատկություններով, որինակ, աչքի լի ընկերվի «Ռուս սոցիալ-դեմոկրատների անելիքները» բրոշները և ընդհանրապես այն ամենը, ինչ դուրս է նեկել նրա զբի տակից: Այն տպավորությունն ե ստացվում, վոր կարծեք թե ՌՍԴԲԿ մանիֆեստը պարզ կերպով տարբերում և մերան կուսակցության մոտավոր անելիքը քաղաքական ազատություն նվաճելը, այսինքն այն նպատակը, վոր նշել են և «Նարոդնայա Վոլիայի» գործիչները: Շարժման վերջնական նպատակների մասին մենք իմանում ենք միայն, վոր հեռանկարում «ինչպես շարժումը, այնպես և ուզդուները—սոցիալիստական են ...» իսկ նարոդովոլեցները մթե սոցիալիստներ չեն համարել իրենց: Այդ գեպքում ել ինչո՞վ և սոցիալ-դեմոկրատիան տարբերվում այն ուղղությունից, վորի լիբերալի ներկայա-

յունիչներն են լեզել «Նարոդնայա Վոլիայի պանծալի դործիչները»:

Սակայն ընդհանուր առմամբ մանիֆեստը, վորը նշանակալից չափով թերաղըված և նլիչան գպրոցի Պետերբուրգի սոցիալ-դեմոկրատիալի հին, կլասիկ հոսանքի ներկայացուցիչների կողմից (որինակ, հայտնի յե, վոր մանիֆեստը գրվել է Պետերբուրգի «Պայքարի մեջության» խմբակի առաջին կոչի գործակիցներից մեջի կամաց կի առաջին կոչի գործակիցներից մեջի, Ստեփան Նվանովիչ Ռադչենկովի իդեալական ազգեկի, Ստեփան Նվանովիչ Ռադչենկովի իդեալական ազգեցայամբ և վերահսկողությամբ), պարզորոշ և բավականաչափ ցալաւուն կերպով և զրել ու լուծել այն կամաչափ ցալաւուն կերպով և զրել ու լուծել այն հարցը, վորը Պետերբուրգի և մեր հեղափոխական շարժման հարցերի հարցը» և համարել այն ե՝ մի քանի սոցիալ-դեմոկրատական երանի կողմից ժխտվող այն սկզբունքը, վորովետարիատի գասակարգային պայքարը պետք ե հանգի քաղաքական պայքարի և առաջին հերթին, վորպես մոտավոր նպատակ, իր առաջ գնի ինքնակալության տապալումը: Այս մեկն արդեն բավարական կան եր, վոր առաջին կուսակցական համագումարի կան եր, վոր առաջին կուսակցական համագումարի կան եր, վոր առաջին կուսակցական համագումարի մի սիստեմներից, վորոնք հետագայում իդեաների մի սիստեմ կազմեցին, վոր հայտնի ին «եկրնոմիզմ» անուահմ կուսակցություններ պատուի, և վորոնց ծայրահեղ արտահայտություններ պատմական հոչակ ստացած «կրեպո» կոչեցյալ դոկումենտը:

Վարդն և կուսակցության և համագումարի նշանակությունը, Արդյոք նա ամուր հիմք ստեղծեց մեր կուսակցության միացման համար: Սրան կարելի լի կուսակցության միացման համար: Վորան կարելի լի կուսակցության միացման համար: Վոր հայտնի վորով կուսակցությունների պատմական համագումարի նախարարը:

Դումարի համարյա թե բոլոր մասնակիցները կուբուտված ավելով սրբվեցին համագումարի վերջանալուց անմիջապես հետո, ինը սուս սոցիալ դեմոկրատներին «Ավկիդացիայի յենթարկելու» համար Զուբատովի կողմէց յերկարատև ժամանակի ընթացքում պլան պատրաստելը վերջացավ համարյա թե բոլոր կազմակերպությունների աճինա ավերումով (1898 թվի մարտի 11-ին ամբողջ Ռուսաստանում ձերբակալվել են մոտ 500 հոգի): Կուսակցությունն առաջվա պես վոչ միայն ցրված մնաց, այլ և սոսկալի չափերով արյունաքամ յեղավ: Կուսակցության կենտրոնական որդան «Բանվորական թերթը» այլևս լույս չտեսավի Սակայն ամենազլխավորն այն է, վոր առաջին համագումարը կուսակցությանը ձևակերպած ծրագիր չտվեց, վորը կը կարողանար կուսակցությունը պահպանել իդեական տատանումներից ու ցնցումներից, կկարողանար կայուն իդեական միասնականությունն ապահովել նրան:

Ցեզ միևնույն ժամանակ հակայական քայլ ե արդաւմ Ռուսաստանում սոց.-դեմոկրատական բանվորական կուսակցություն հիմնելու համար: Դրոշ ե պարզվում, վորի շուրջը հետաքայում կարողանալին հավաքվել բոլոր նրանք, ովքեր գեռ վաղուց յերազում ենին անդամ լինել միասնական սուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցության: Այս սուսկերը զբողը լավ ե ծեց Մինսկում տեղի ունեցած կուսակցական համագումարի առաջին լուրը: Նա ուրախացավ ինչպես յերեխա: Նա մեծ հպարտությամբ հայտարարեց մեզ, աքսորավայրի իր ամենամուտ ընկերներին և համախոհներին, վոր այդ որվանից նա Ռուսաստանի սոցիալ-

դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ եւ Մինսկ նույնպես բոլորս մեծ գոհունակությամբ ձախակցեցինք մեզ համար այդ նոր մոտիվին և կարծեք թե միանգամից մեր սեփական աչքում բարձրացանք:

Հայտնի է, վոր հետագայում ևս իսկական (վոչ թե «լիպովի», ինչպես այժմ են ասում) սոցիալ-դեմոկրատներից (ներկայիս արտահայտությամբ կոմունիստների) վոչ վոք և համագումարի մասին չի խոսել, վորպես անհշան եղիղողի մասին, վորն իրը թե վոչ մի աղղեցություն չի ունեցել Ռուսաստանի հեղափոխական շարժման հետագա պատմության վրա: Ընդհակառակը, կուսակցության առաջին համագումարը յեւլակիտ հանդիսացավ սոցիալ-դեմոկրատիայի հետագա աշխատանքի համար: «Իսկրան»—հին, իլլիչյան «Իսկրան» տիրացավ առաջին համագումարի թողած ժառանգությունը և հետագայում հսկայական աշխատանք կատարեց կուսակցական ուժերը հավաքելու, միաձուլելու և միացնելու ասպարիզում: Կուսակցության յերկրորդ համագումարն իր ուղղակի հաջորդական կապը հաստատեց առաջին համագումարի հետ: Ցեվ նույնը իսկ բունդականները, վորոնք, ընդհանրապես առած, տրամադրի չեցին յենթարկվել իրենց «ինքնուրունությունը» ձնող կուսակցական վորոշումներին, փորձեցին իրենց դիրքը և համագումարում պաշտպանել հենվելով (թեև ապարդյուն) առաջին համագումարի բոլորի համար անժիխտելի հեղինակության վրա:

Այսպիսով, մենք համարձակ կարող ենք ասել, վոր առաջին համագումարը շատ կարևոր և եյական հուսական իշեղի մեր կուսակցության պատմության մեջ:

Այս հարկավոր ե զնահատել վոչ միայն վորպես կուտակության մկրտության «ռիտուալ» (ծխական) մի մոմենտ «այլ և վորպես երա կահեռում մի ամբողջ ժաքանի վառ արտահայտության ու ավարտում»։ Իր «Ի՞նչ անել» բրոշյուրի ինքրափակման գլխում այդ շրջանի բնորոշումը տալով, իլլիչը վառ գույներով և պատկերացնում այն իբրիտասարդ, վառվառն շարժումըն ու այն պալքարը, վորոնք զուգակցեցին 90 ական թվականների եղրիմալի մարքսիստների նոր սերնդի հեղափոխական մարտարեմ դուրս գալուն։

«Պայքարը, — գրում ե Իլլիչը, հարկադրում և սովորել, կարգալ ամեն տեսակ ուղղության անկեցալ յերկեր, ուժեղ թափով չթաղվել լեզալ նարոդնիկության հարցերով։ Այս պալքարում գաստիարակված սոցիալ-դեմոկրատները մտան բանվորական շարժման ասպարեզը, «վոչ մի բռուկ» մոռացության չտալով վոչ իրենց վառ լուսով լուսավորած մարքսիզմի թեորիան և վոչ ել ինքնակալության տապալման խնդիրը։ 1898 թվի գարնան կուսակցության հիմնումը այդ շրջանի սոցիալ-դեմոկրատների ամենառեալ և միենուն ժամանակ վերջին (ընդգծումն իլլիչին ե — Պ. Լ.) գործն է յեղել»։

Կարճ ասած, առաջին համագումարն այն ժամանակ ծնունդ առած և հետագայում անքան փալլուն կերպով ծագալված լենինիզմի պատմության մեջ առաջին շրջանի ավարտումն եր։

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԴՈՒՍՏԱՑԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԵՍԸԸ

Սրանից 50 տարի առաջ Յեղոսպայի վրայով անցավ 1848 թվի հեղափոխության կենարար փոթորկելը։

Առաջին անգամ, վորպես խոշոր պատմական ուժ, մարտարեմ գուրս յեկավ ժամանակակից բանվոր դասակարգը։ Նրա ուժերով բուրժուազիալին հաջողվել ե տապալել շատ հնացած ֆեոդալ-միապետական կարգեր։ Բայց բուրժուազիան արագ կերպով նոր դաշնակցի մեջ իր ամենաչարամիտ թշնամուն տեսավ և իրեն, թե նրան ու թե ազատության գործը հանձնեց ուսակցիալի ձեռքը։ Սակայն, արդեն ուշ եր. ժամանակավոր կերպով խաղաղացված բանվոր դասակարգը 10—15 տարուց հետո նորից հանդես յեկավ պատմության բեմում՝ կրկնապատկած ուժերով, աճած թիւն բերած կրկնապատկած ուժերով, աճած թիւն բնագիտակցությամբ, վորպես իր վերջնական տիրապետական համար միտնգաման հասունացած մարդատարությունը գովելի չանառիբությումը ինքն և պատ-

Այս տմբողջ ժամանակը թուսաստանն, ըստ յերկութիւն, պատմական շարժման մեծ ձանապարհի մի կողմն և մնացել։ Այսուղեղ դասակարգերի պայքար չի նկատվել, բայց նա յեղել ե և, վոր վլխավորն ե, չի նկատվել, բայց նա յեղել ե և, վոր վլխավորն ե, չի նկատվել, բայց նա յեղել ե ու աճել։ Ռուսական կոստարությունը գովելի չանառիբությումը ինքն և պատ-

ըաստել դասակարգալին պայքարի սերմեր, թշվառաց-  
նելով գյուղացիներին, հովանավորելով կալվածատե-  
րերին և աշխատավոր բնակչության հաշվին կերակ-  
րելով ու ուռնացնելով կապիտալիստներին։ Սակայն  
բուրժուական-կապիտալիստական հասարակարգն ա-  
ռանց պրոլետարիատի կամ բանվոր դասակարգի չի  
կարող գոյություն ունենալ։ Վերջինս ծնունդ և առ-  
նում կապիտալիզմի հետ միասին, աճում նրա հետ  
միասին, ամրանում և իր աճման ընթացքում ավելի  
և ավելի մեծ չափով պայքարի բռնվում բուրժուա-  
գիայի հետ։

Ոռուս գործարանային բանվորը, թե ճորտ և թե  
ազատ, շարունակ գաղտնի ու բացահայտ պայքար և  
մղել իրեն շահապսրծողների գեմ։ Կապիտալիզմի զար-  
գացման հետ զուգընթաց այդ պայքարի չափերն աճե-  
ցին, նրանք բնդզբակեցին բանվոր բնակչության ավել-  
իք ու ավելի խոշոր խավեր։ Ոռուս պրոլետարիատի գա-  
սակարգային ինքնազմիսակցության արթնացումը և  
առարելային բանվորական շարժման աճումը զուգա-  
ղիպեցին միջազգային սոցիալ-դեմոկրատիալի, վոր-  
պես ամբողջ աշխարհի գիտակից բանվորների դասա-  
կարգային կովկ և դասակարգային իդեալի կրողի,  
վերջնական զարգացմանը։ Բոլոր նորագույն ոռուս  
բանվորական կազմակերպությունները շարունակ իրենց  
գործունելության մեջ, գիտակցաբար թե անդիտակ-  
ցաբար, գործել են սոցիալ գեմոկրատական իդեաների  
վորով։ Բանվորական շարժման և նրա վրա նենվող սո-  
ցիալ-դեմոկրատիալի ուժն ու նշանակությունն ամե-  
նից ցայտուն կերպով հալտնաբերեցին վերջին ժամա-  
նակներու Ռուսաստանում և Լեհաստանում տեղի ու-

նեցած մի շարք գործադրուներ, մասնավորապես Պե-  
տերբուրգի շուրջակների ու մասողների 1896 և 1897  
թվականներին հայտարարած հայտնի գործադրուները։  
Այս գործադրուները կառավարությանը հարկադրեցին  
հրատարակել 1897 թվի հունիսի 2-ի՝ բանվորական  
ժամանակի տևողության վերաբերյալ որենքը։ Այդ ո-  
րենքը—վորքան ել նա մեծ թերություններ ունի—  
ընդմիշտ անմոռանալի ապացույց կմնա այն հզորա-  
գության, վոր կառավարության որենսդրական և  
այլ գործունեյության վրա գործում են բանվորների  
միացրած ջանքերը։ Իզուր և կառավարությունը կար-  
ծում, թե զիջումներով կկարողանա հանգստացնել  
բանվորներին։ Ամենուրեք բանվոր դասակարգն այն-  
քան ավելի յի պահանջոտ դառնում, վորքան ավելի  
շատ են տալիս նրան։ Նույնը տեղի կունենա և ուս-  
շում են տալիս նրան։ Նույնը տեղի կունենա և ուս-  
շում են տալիս նրան։ Այժմ ավելի են պրոլետարիատի հետ։ Նրան մինչև այժմ ավելի են աշ-  
միայն այն ժամանակ, իերը նա պահանջել և և աշ-  
ուուհանե ել տալու յի միայն այն, ինչ նա կպահանջի։  
— իսկ ինչ չի հարկավոր սուս բանվոր դասակար-  
գին։ Նա բոլորովին զրկված և այն բանից՝ վորից  
պատահանջան ընկերները, այն և պետության կառա-  
վարման գործում մտանակցելուց, բանավոր և տպա-  
գիր խոսքի ազատությունից, միությունների և ժողով-  
ների պատությունից, — մի խոսքով՝ այն բոլոր զեն-  
քերից ու միջոցներից, վորոնցով արևմտան Յեվրո-  
պերից ու միջոցներից, վորոնցով արևմտան Յեվրո-  
պերի և Ամերիկայի պրոլետարիատը բարելավում և  
պայի և Ամերիկայի պրոլետարիատը բարելավում և  
իր գրությունը և դրա հետ միասին պայքարում իր  
վերջնական ազատազման համար մասնավոր սեփա-  
կերջնական ազատազման պայքարում իրմանության և կապիտալիզմի դեմ—սոցիալիզմի հա-

մար: Քաղաքական պատությունը սուս պրոլետա-  
րիատին հարկավոր է ինչպես մաքուր ողը առողջ  
շրջանառության համար: Խա - նրա ազատ զարգաց-  
ման և մասնակի բարելավությանը ու վերջնական ա-  
զատագրման համար հաջողությամբ պայքարելու հիմ-  
նական պայմանն է:

Սակայն սուս պրոլետարիատն իր համար անհրաժեշտ քաղաքական ազատությունը կարող է նվաճել միայն ինքը:

Վորքան դեպի Յելրոպալի արևելքն ենք գնում,  
այնքան քաղաքական տեսակետից ավելի թուզ, վախ-  
կոտ և ստոր և գառնում բուրժուազիան և այնքան  
ավելի խոշոր կուլտուրական, քաղաքական խնդիրներ  
են բաժին ընկնում պրոլետարիատին: Իր ամրակուռ  
ուսերի վրա սուս բանվոր դասակարգը պետք և տա-  
նի և կտանի քաղաքական ազատություն նվաճելու  
գործը. այս անհրաժեշտ, բայց միայն առաջին  
քայլն և պրոլետարիատի խոշոր պատմական միսսիան  
իրագործելու ուղիում, այն և ստեղծել այնպիսի հա-  
սարակաբդ, վորտեղ մարզը մարզու կողմից չշահա-  
գործվի: Մուս պրոլետարիատը գեն կնետի իրենից  
ինքնակալության լուծը, վորպեսզի ավելի մեծ յեռան-  
դով շարունակի պայքարել կապիտալիզմի և բուր-  
ժուազիայի դեմ՝ մինչև սոցիալիզմի վերջական հաղ-  
թանակը:

Ուուական բանվորական շարժման և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջին քայլերը չելին կարող դրված չլինել վորոշ իմաստով պատճական, միասնականությունից և պլանից զուրկի: Այժմ հասել է ժամանակը սուս սոցիալ-դեմոկրատիաի տեսական

ուժերը, խմբակներն ու կազմակերպությունները համախմբել մի միացյալ «Մուսաստանի Սոցիալ-Դիմոկրատական Բանվորական Կուսակցության» մեջ, Այս գիտակցելով՝ «բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միությունների», «Բանվորական թերթ» հրատարակող խմբակի և «Մուսաստանի ու Լեհաստանի համահրեական բանվորական միության» ներկայացուցիչները մի համագումար կազմակերպեցին, վարի վարոշությունները ստորև բերվում են:

Տեղական խմբակները, միանալով մի կուսակցության մեջ, գիտակցում են. այդ քայլի ամբողջ կարեվորությունը և նրանից լվանող պատասխանատվության ամրող նշանակությունը: Դրանով նըրանք վերջնականապես հիմք են դնում ոռւսական հեղափոխական շարժման գիտակից դասակարգավիճակի նոր եպոխա անցնելուն: Խնչակն շարժումը, պատքարի նոր եպոխա անցնելուն: Խնչակն այնպիս և ուղղությունը սոցիալիստական և: Ռուսաստանի Սոցիալ-կեմոկրատական կուսակցությունը շարունակում է Ռուսաստանի նախընթաց վողջ հետապոխական շարժման գործն ու տրադիցիաները. կուսակցության մերձավոր խնդիրներից զիսավորակույնը համարելով քաղաքական ազատության նվաճումը, սոցիալ-կեմոկրատիան վիմում և դեպի այն նպատակը, վարը պարզ կերպով գենես «Նարոդնայա պոլիակի» փառապահն գործիչներն են նշել: Սակայն միջոցներն ու ուղիները, վոր սոցիալ-դեմոկրատիան և ընտրում, այլ են: Նրանց ընտրությունը վորոշում են նշանով, վոր նա գիտակցաբար ուղղում երաշվում կերպված բանվորական մասսաների դաւակարկագման վրա ինչ ամառանալու մեջ և մաս այլպիսին: Նա հայտնաբերության մեջ է գտնվում:

տատապես համոզված ե, վոր «բանվոր դասակարգի ազատագրումը կարող ե միայն նրա սեփական գործը լինել» և անշեղ կերպով պետք ե իր բոլոր գործողությունները համաձայնեցնի միջազգալիին սոցիալ դեմքրատիալ այս հիմնական սկզբունքի հետ:

Կեցցե՛ ոռւսական, կեցցե՛ միջազգալիին սոցիալ դեմքրատիան,

## ՀԱՄԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. «Բանվոր դասակարգի ազատագրման համար պայքարող միությունների», «Բանվորական թերթի» խմբակի և «Ռուսաստանի ու Լեհաստանի համահեք յական բանվորական միություն» կազմակերպությունները միանում են և կազմում մի միաձույլ կազմակերպություն, «Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն» անունով, ըստ վորում «Ռուսաստանի ու Լեհաստանի համարեական բանվորական միությունը» կուսակցության մեջ և մասնում, վորպես ինքնավար մի կազմակերպություն, վորը ինքնուրուն և միայն այն հարցերում, վորոնք հատկապես հրելա պրոլետարի ատին են վերաբերում:

2. «Կուսակցության» գործադիր որգանը կենտրոնական կոմիտեն և, վորն ընտրում է «Կուսակցության» համագումարը, վորին և նա հաշվետվություն և տալիս իր գործունեության մասին:

3. Կենտրոնական կոմիտեի պարտականություններն են:

ա) Հոգ տանել «Կուսակցության պլանաչափ գործունեյության մասին (ուժերի ու միջոցների լուշ-

խում, միատեսակ պահանջների առաջադրում ու կիրառում և այլն); Բատ այնմ կենտրոնական կոմիտեն զեկավարվում է «Կուսակցության» համագումարների կողմից տրվող ընդհանուր ցուցումներով;

բ) Տեղական կոմիտեների համար գրականություն պատրաստելը և մատակարարելը;

գ) Այնպիսի ձեռնարկություններ կազմակերպելը, վորոնք Ռուսաստանի համար ընդհանուր նշանակություն ունեն (մայիսի 1-ի տոնակատարումը, աչքի ընկնող փաստերի առթիվ թերթիկներ հրատարակելը, գործադրություններին ողնելը և այլն):

4. Հատուկ կարելոր գեպքերում կենտրոնական կոմիտեն զեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

ա) Տարկետում թույլատրող հարցերում կենտրոնական կոմիտեն պարտագոր և ցուցումներ ստանալու համար դիմել «Կուսակցության» համագումարին:

բ) Տարկետում չթույլատրող հարցերում կենտրոնական կոմիտեն միաձայն վարչական համաձայն ինքնուրուն և վարդում, արածի մասին հաշվետվություն տալով «Կուսակցության» մերձավոր հերթական կամ արտակարգ համագումարին:

5. Կենտրոնական կոմիտեն իրավունք ունի իր կազմը լրացնելու նոր անդամներով:

6. «Կուսակցության» միջոցները, վոր կենտրոնական կոմիտեի տնօրինության ներքո լին գտնվում, կազմվում են.

ա) Տեղական կոմիտեների կամավոր միանվագ մուծումներից «Կուսակցության» կազմվելու մոմենտին:

բ) Տեղական կոմիտեների միջոցներից կամավոր պարերական հատկացումներ անհլուց,

կ) «Կուսակցության» համար հատուկ զանձում-ներից:

7. Տեղական կոմիտեները կենտրոնական կոմիտեյի վորոշությունը իրագործում են այն ձևով, վորը նրանք ավելի հարմար կդտնեն ըստ տեղական պայմանների: Բացաւիկ զեպքերում տեղական կոմիտեներին իրավունք ե վերապահվում հրաժարվելու կենտրոնական կոմիտեյի պահանջները կատարելուց, նրան հայտնելով հրաժարվելու պատճառը: Մնացած բոլոր դեպքերում տեղական կոմիտեները միանգամայն ինքնուրույն են գործում, դեկավարվելով միայն «Կուսակցության» ծրագրով:

8. «Կուսակցությունը» իր կենտրոնական կոմիտեի միջոցով հարաբերությունների մեջ և մտնում այլ հեղափոխական կազմակերպությունների հետ, վորչափով այդ չի խախտում նրա ծրագրի սկզբունքները և նրա տակաթեայի պրյունները: «Կուսակցություն» ընդունում ե, վոր ամեն մի ազգություն ինքնորոշվելու իրավունք ունի:

**Թանօրություն.** Տեղական կոմիտեներն այդպիսի կազմակերպությունների հետ հարաբերությունների մեջ են մտնում միայն կենտրոնական կոմիտեի գիտությամբ և նրա ցուցումներով:

9. «Կուսակցության» վերագույն մարմինը տեղական կոմիտեների ներկայացուցիչների համագումարն ե: Համագումարները լինում են ներթական և արտակարգ: Յուրաքանչյուր ներթական համագումար նշանակում ե հետևյալ ներթական համագումարի ժամանակը: Կենտրոնական կոմիտեն արտակարգ համագումարներ ե հրավիրում ինչպիս սեփական նախաձեռնու-

թյամբ այնպիս և տեղական անդամների թվի լերկությունունիվ:

10. Արտասահմանյան «Խռուսացիալ-դեմոկրատիկ միությունը» «Կուսակցության» մի մասն և և նրա արտասահմանյան ներկայացուցիչը:

11. «Կուսակցության» պաշտոնական որդան և հայտարարվում «Բանվորական թերթը»:

(«Կուսակցության» մանրամասն ծրագրը հիմարակվի տեղական կոմիտեների կողմից այն քըննության առնելուց հետո):

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կուսակցության» առաջին համագումարի քայլությանի առթիվ: Կուսակցության համագումարի մասին (Ելեկլամանի և ուրիշների հոգվածները), «Պրոլետարական թերթուցիալ» №1:

2. Ներկայացնելու համար՝ «Պրոլետարական թերթուցիալ» №1:

3. Վ. Նեվակի: «Թերթագծեր, Ռեկ (բայց կիների) պատմության վեցարույր, Համա. և (ՌՍԴԲԿ առաջին համագումարի պերաբերակալ գլուխը):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

100



2361

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.